ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՈԴՈՒԼՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ 30 ԿՐԵԴԻՏԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ

Կրթական ծրագիր

Կրթական գործընթացների կառավարման և Բարեփոխումների վարչություն

Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի

Բովանդակություն

Ներածություն 3

Բաժին 1. Իրականացված դասընթացի վերաբերյալ 3

Բաժին 2. Դասավանդման մեթոդների մասին 7

Բաժին 3. Հոգեբանամանկավարժական որակների մասին 13

Առաջարկություններ 17

Ներածություն

Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությունը, ինչպես նաև Կրթության որակի ապահովման և կառավարման բաժինն իրականացնում է սոցիոլոգիական հարցումներ՝ ՀՊՄՀ-ում ուսումնական և կրթական գործընթացից ուսանողների բավարարվածության աստիճանի բացահայտման, կարիքների վերհանման և ծագած խնդիրների լուծման ուղիներ մշակելու նպատակով: Մենք հավատացած ենք, որ ցանկացած հետազոտության արդյունքների վստահելիությունն առաջին հերթին կախված է հետազոտության մեթոդաբանության և ընթացակարգի հստակ սահմանումից, պահպանումից և խելամիտ վերահսկողությունից:

Ստորև ներկայացնենք «Մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման» կրթական ծրագրի գնահատման հարցաթերթի քանակական և որակական վերլուծությունը:

Հարցումը կատարվել է անանուն ձևաչափով, որին մասնակցել է 46 ուսանող:

Վերլուծությունը ներկայացնենք ըստ բաժինների:

Բաժին 1. Իրականացված դասընթացի վերաբերյալ

Այս բաժնում ներառված հարցերով պարզաբանում ենք, թե որքանով է մեկնաբանվում դասընթացի նպատակը այն սկսվելուց առաջ, որքանո՞վ է բավարարվածությունը տվյալ դասընթացի դասախոսությունների կամ առաջադրանքների փաթեթի տրամադրման ծավալից, որքանո՞վ է դասընթացը նպաստել մասնագիտական կայացման գործընթացին և առաջարկվել է գնահատել ողջ դասընթացը: Գնահատման սանդղակը սահմանվել է 5 միավորի սահմաններում:

Այժմ ներկայացնենք յուրաքանչյուր հարցից ստացված արդյուքների վերլուծությունը տրամագրերի տեսքով:

Հարց 1. Որքանո՞վ է մեկնաբանվում դասընթացի նպատակը այն սկսելուց առաջ:

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ դասընթացի նպատակը այն սկսվելուց առաջ, գնահատվել է 86%, որից միայն 5 միավորը կազմում է 73%, հետևաբար կարելի է այն գնահատել միջինից բարձր: ցուցանիշով: Տե՛ս տրամագիր 1:



տրամագիր 1

Հարց 2. Որքանո՞վ է Ձեզ բավարարում տվյալ դասընթացի դասախոսությունների կամ առաջադրանքների փաթեթը, որոնք տրամադրվել են Ձեզ:

Ուսանողների բավարարվածութունը դասախոսների կողմից տրամադրած դասախոսությունների կամ առաջադրանքների փաթեթնեից, գնահատումն իրականացվել է հետևյալ կերպ՝ 5 մաիվորը կազմում է 68%, 4 միավորը՝ 14% , 3 միավորը՝ 8%, 2 միավորը՝ 4%, 1 միավորը՝ 4%, 0 միավորը՝ 2%: Այս ցուցանիշները փաստում են այն մասին, որ բավարարվածությունը կարելի է որակավորել միջին մակարդակով: Տե՛ս տրամագիր 2:



Տրամագիր 2

Հարց 3. Խնդրում ենք գնահատել, թե դասընթացն որքանո՞վ է նպաստում Ձեր մասնագիտական կայացման գործընթացին

Տվյալ դասընթացը որքանով է նպաստում ուսանողի մասնագիտական կայացմանը, արդյուքներն ամփոփելով կարելի է որակավորել միջինից բարձր ցուցանիշով: Տե՛ս տրամագիր 3:



Տրամագիր 3

Հարց 4. Խնդրում ենք գնահատեք դասընթացն ամբողջությամբ:

Դասընթացն ամբողջությամբ գնահատվել է հետևյալ կերպ, որն ակնառու ներկայացված է տրամագիր 4-ում: Արդյունքները վերլուծելով՝ կարելի է ցուցանիշը բնութագրել միջինից բարձր: Տե՛ս տրամագիր 4:



տրամագիր 4

Բաժին 1-ի ամփոփում



Տրամագիր 5

Ներկայացված դիագրամների արդյունքների քանակական վերլուծությունը փաստում են այն մասին, որ դասընթացը որակապես ապահովել է ուսանողի մասնագիտական կայացման գործընթացին միտված բավարարվածությունը: Առանձնահատուկ վերլուծության ենթարկենք “Տարիքային զարգացման հոգեբանություն” դասընթացը, որն ըստ դիագրամների ախտորոշում է ոչ

բավարարվածություն, այն է՝ բաժնի յուրաքանչյուր հարցադրմանը վաստակել է “0” միավոր, ինչը որպես խնդրահարույց իրավիճակ, առաջարկվում է պարզաբանել և հետադարձ կապի միջոցով դուրս բերել այդ դասընթացի անբավարար գնահատականների ծագման աղբյուրը:

Բաժին 2. Դասավանդման մեթոդների մասին

Այս բաժնում ներառված հարցերը մշակվել են պարզաբանելու՝ դասախոսի կողմից դասընթացի նկատմամբ հետաքրքրության ապահովման, մատուցվող նյութի վերաբերյալ ուսանողների տված հարցերի խրախուսման, դասագործընթացում բարդ հասկացությունների մեկնաբանման նախաձեռնողականության, հանձնարարականների մատչելի ձեակերպումների, ինտերակտիվ մեթոդների կիրառման հաճախականության հետ կապված խնդիրները:

Արդյունքները ցույց տանք դիագրամների տեսքով:

Հարց 1. Խնդրում ենք գնահատել դասախոսի կողմից դասընթացի նկատմամբ հետաքրքրության պահպանումը



Տրամագիր 6

Ըստ տրված տրամագրի կարելի է ասել, որ դասախոսի կողմից դասընթացի նկատմամբ հետաքրքրությունը պահպանելը գնահատվել է ուսանողների կողմից հետևյալ կերպ 5 միավորը կազմում է 79%, 4 միավորը՝ 10%, 3 մաիվորը 5%, 2 միավորը 2%, 1 միավորը 3% 0 միավորը՝ 1%: Յուրաքանչյուր միավորին շնորհված տոկոսային արժեքը ասում է այն մասին, որ այս հարցը կարելի է որակավորել միջինից բարձր ցուցանիշով:

Հարց 2. Խնդրում ենք գնահատել մատուցվող նյութի վերաբերյալ ուսանողների տված հարցերի խրախուսումը դասախոսի կողմից:

Այս հարցին ուսանղների պատասխաններն արտահայտվել են հետևյալ տոկոսային արժեքներով. 5 միավորը՝ 83%, սակայն դրա դիմաց ունենք 0 միավոր, որը կազմում է 2%, Տոկոսայաին հարաբերությամբ բարձր միավորը գերակայում է, սակայն որակական տեսանկյունից վերլուծելով՝ անհրաժեշտ ենք համարում դուրս բերել այն դասընթացը, որը խնդրահարույց է և պարզել խնդրի աղբյուրները: Տե՛ս տրամագիր 7:



Տրամագիր 7

Հարց 3. Խնդրում ենք գնահատել դասախոսի կողմից ուսանողների տված հարցերի պատասխանների որակը:

Դասախոսի կողմից ուսանողների հարցերին պատասխանները գնահատվել են հետևյալ կերպ: Նշեն ամենաբարձր ցուցանիշը՝ 5 միավորը, 80% է, իսկ ամենացացր ցուցանիշը՝ 0 միավորը, 1%: Այս հարաբերությունը փաստում է միջինից բարձր մակարդակ: Սակայն անհրաժեշտ է անդրադարձ կատարել ցածր միավոր վաստակած դասընթացներին՝ պարզելու խնդիրները:



Տրամագիր 8

Հարց 4. Խնդրում ենք գնահատել դասագործընթացում բարդ հասկացությունների մեկնաբանման դասախոսի նախաձեռնողականությունը:

Դասախոսի նախաձեռնողականությունը բարդ հասկացություններին հարցի գնահատումը ներկայացված է տրամագիր 9-ում, որտեղ 5 միավորը՝ 80% է, իսկ մնացած միավորների հանրագումարը՝ 20%: Համեմատելով արդյունքները՝ ցուցանիշը որակական տեսանկյունից՝ միջինից բարձր է:



Տրամագիր 9

Հարց 5. Խնդրում ենք գնահատել արտալսարանային հանձնարարությունների դյուրըմբռնելիությունը:

Արտալսարանային հանձնարարությունների դյուրըմբռնելիությունը ուսանողների կողմից ստացված արդյունքներն ամփոփելով, որը տրված է

տրամագիր 10-ում, կարելի է որակավորել միջինից բարձր ցուցանիշով: Տե՛ս տրամագիր 10:



Տրամագիր 10

Հարց 6. Խնդրում ենք գնահատել կիրառվող դասավանդման մեթոդների արդյունավետությունը:

Դասավանդման մեթոդների արդյունավետությունը դասագործընթացում, ըստ տրամագիր տվյալների կարելի է գնահատել միջինից բարձր ցուցանիշով: Ուշադրություն դարձնենք միայն 0 միավորի արտահայտած արժեքին, որը 2% է կազմում: Նշենք այն դասընթացը, որը վաստակել է այդ միավորը. «Տարիքային զարգացման հոգեբանություն» և մշակենք մեխանիզմ՝ պարզելու այս խնդրահարույց իրավիճակի պատճառը:



Տրամագիր 11

Հարց 7. Խնդրում ենք գնահատել դասախոսի կողմից նյութի մատուցման պարզությունը և մատչելիությունը:

Նյութի մատուցման պարզությունը և մատչելիությունը գնահատվել է բարձր միավորներով: Արդյուքները երևում են տրամագիր 12-ում: Նշենք, որ 5 և 4 միավորների հանարգումարը կազմում է 94%: Մնացածը՝ 6% է կազմում: Տե՛ս տրամագիր 12:



Տրամագիր 12

Հարց 8. Ի՞նչ չափով է դասախոսն օգնում ուսանողին՝ ելնելով վերջինիս ուսումնական կարիքներից:



Տրամագիր 13

Որքանով է բավարարում դասախոսը ուսանողի ուսումնական կարիքները, ըստ տրամագրի տվյալների ամփոփման կարելի է գնահատել միջինից բարձր ցուցանիշով: Բարձր չի որակավորվում, քանի որ 1 և 0 միավորներով գնահատում ունենք:

Հարց 9. Խնդրում ենք գնահատել դասընթացում ինտերակտիվ և ժամանակակից մեթոդների կիրառելիությունը:

Դասընթացում ինտերակտիվ և ժամանակակից մեթոդների կիրառելիությունը ուսանողների կողմից գնահատվել է ինչպես բարձր միավորներով, այնպես էլ, ցածր միավորներով: Նշենք, որ 0 միավորը կազմում է 3%, ինչը որակական վերլուծության տեսանկյունից խնդրահարույց է:



Տրամագիր 14

Բաժին 2-ի համեմատական վերլուծություն

Քանակական տվյալները վերլուծելով նկատելի է, որ բոլոր դասընթացները, բավարարել են բաժնում ներառված հարցերի դիտարկման շրջանակը և փաստում են գոհունակության բարձր մակարդակը:

Առանձնահատուկ ուշադրություն դարձնենք “Տարիքային զարգացման հոգեբանություն” դասընթացին, որը բաժնում ներառված 9 հարցերից յուրաքանչյուրում վաստակել “0” միավոր, որը տվյալ դասընթացի դասավանդման մեթոդների հետ կապված խնդիրներ է վեր հանում: Առաջարկվում է մշակել

մեխանիզմ այդ իրավիճակին հստակ լուծումներ տալու համար և ապահովել հետադարձ կապ:



Տրամագիր 15

Բաժին 3. Հոգեբանամանկավարժական որակների մասին

Այս բաժնում ներառված հարցերը միտված են լուսաբանելու դասախոսի գիտելիքների նկատմաբ վստահությունը, ժամանակի արդյուանվետ օգտագործման արդյունավետությունը, սովորողի նկատմամբ հարգալից վերաբերմունքը, օբյեկտիվությունն ու անաչառությունը:

Տվյալները ներկայացնենք դիագրամների տեսքով:

Հարց 1. Խնդրում ենք գնահատել Ձեր վստահությունը դասախոսի գիտելիքների նկատմամբ:

Դասախոսի գիտելիքների նկատմամբ վստահությունը գնահատվել է 88% 5 միավորով, մնացածը՝ 12%-ը տրվել է 1-4 միավորներին, 0 միավորով գնահատում չի եղել:

Տրամագիր 16

Հարց 2. Խնդրում ենք գնահատել դասախոսի կողմից ժամանակի արդյունավետ օգտագործման կարողությունը

Դասախոսի՝ ժամանակի արդյունավետ օգտագործումը գնահատվել է բարջր ցուցանիշով, որի համար փաստում է տրամագրում ներկայացված արդյուքների քանակակն վերլուծությունը: Տե՛ս տրամագիր 17:



Տրամագիր 17

Հարց 3. Խնդրում ենք գնահատել դասախոսի կողմից սովորողների նկատմամբ հարգալից վերաբերմունքը:

Դասախոսի կողմից հարգալից վերաբերմունքը չնայած բարձր միավորներով գնահատականի, տրամագրում արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս 0 միավորով տոկոսային արժեքը 3% է կազմում, որը որպես խնդրահարույց իրավիճակա պարզաբանումների կարիք ունի:



Տրամագիր 18

Հարց 4. Խնդրում ենք գնահատել դասախոսի օբյեկտիվությունը եւ անաչառությունը

Դասախոսի օբյեկտիվությունը և անաչառությունը գնահատվել է բարձր միավորներով, սակայն 0 միավորը կազմում է 2%, որին որպես խնդրահարույց իրավիճակ հարկ ենք համարում անդրադարձ կատարել: Դուրս են բերվել այն դասընթացները, որոնք գնահատվել են ցածր միավորներով և առաջարկվել է համապատասխան ամբիոններին հետադարձ կապով մեկնաբանել նման իրավիճակներին ինչպիսի լուծումների մեխանիզմներ են մշակվել:



Տրամագիր 19

Բաժին 3-ի համնեմատական վերլուծություն



Տրամագիր 20

Քանակական տվյալները վերլուծելով նկատելի է, որ բոլոր դասընթացները, բավարարել են բաժնում ներառված հարցերի դիտարկման շրջանակը և փաստում են գոհունակության բարձր մակարդակը:

Առանձնահատուկ ուշադրություն դարձնենք «Տարիքային զարգացման հոգեբանություն» դասընթացին, որը բաժնում ներառված 4 հարցերից յուրաքանչյուրում վաստակել “0-5” միավորներ, որը տվյալ դասընթացը հոգեբանամանկավարժական տեսանկյունից դիտարկելով որակավորվում է խնդրահարույց և կարիք ունի պարզաբանումների:

Առաջարկություններ

Հարցումը ներառել է նաև առաջարկություններ բաժին, որտեղ ընդհանրական վերլուծություն կատարելով կարելի է ասել, որ արտահայտում է գոհունակություն, ինչպես կազմակերպական, այնպես էլ, դասավանդման, ուսումնառության տեսանկյունից:

Ներկայացնենք առաջարկության մեկ նմուշ-օրինակ.

1. «Ստեղծել երկու խումբ ՝ դասավանդողի և ոչ դասավանդողի
2. Դասավանդող խումբ՝ 3 շաբաթ պրակտիկա, ոչ դասավանդող՝ 4 շաբաթ,
3. Առկա դասեր լինեն: